ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արբաթ, (093) 90-98-99, www.arbathamaynq.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 35

ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 05.12.2016Թ-Ի ԹԻՎ 13-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 12-րդ հոդվածի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Արբաթ համայնքի ավագանու 05.12.2016թ-ի Թիվ 13 նիստի հետևյալ օրակարգը՝

1. Արբաթ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին:
3. Արբաթ համայնքի 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
4. Արբաթի համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող հիմնական միջոցների և գույքագրման արդյունքների հաստատման մասին:
5. Արբաթի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբի համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների համար հավելավճար սահմանելու մասին:
6. Արբաթ համայնքի երաժշտական դպրոց ՊՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2017թ-ի գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
7. Արբաթ համայնքի կուլտուրայի տան շենքի գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՅԱՆ ՔՅԱՐԱՄ

2. ԲՈՅՄՈՒՇԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

3. ԳԱԼՍՏՅԱՆ ՀՈՎՍԵՓ

4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՍԵՆ

5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

6. ՓԱՆՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արբաթ, (093) 90-98-99, www.arbathamaynq.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 36-Ն

ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանել 300.000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՅԱՆ ՔՅԱՐԱՄ
2. ԲՈՅՄՈՒՇԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՀՈՎՍԵՓ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՓԱՆՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արբաթ, (093) 90-98-99, www.arbathamaynq.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 37-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Արբաթի համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանել՝

1. Աշխատակազմի քարտուղար 1 դրույք 190.000 դրամ:
2. Ղեկավարի տեղակալ 1 դրույք 160.000 դրամ:
3. Գլխավոր մասնագետ 1 դրույք 185.000 դրամ :
4. Առաջատար մասնագետ 1 դրույք 160.000 դրամ:
5. Առաջին կարգի մասնագետ 159.000 դրամ:
6. Երկրորդ կարգի մասնագետ 158.000 դրամ:
7. Հավաքարար 1 դրույք 73.000 դրամ:
8. Վարորդ 1 դրույք 120.000 դրամ:
9. Տնտեսվար՝ 1 դրույք 120.000 դրամ:

Երաժշտական դպրոց՝

1. Տնօրեն 1 դրույք 96.000 դրամ:
2. Հաշվապահ 1 դրույք 90.000 դրամ:
3. Դաշնամուրի դասատու 2 դրույք 80.000 դրամ:
4. Քանոնի դասատու 1,5 դրույք 80.000 դրամ:

5. Շվիի, բլուլի դասատու 1 դրույք 80.000 դրամ:
6. Դաշնամուր լարող 0.5 դրույք 40.000 դրամ:
7. Կիթառի դասատու 1 դրույք 80.000 դրամ:
8. Տեսականի դասատու 1 դրույք 80.000 դրամ:
9. Ջութակի , ալտի դասատու 1 դրույք 80.000 դրամ:
10. Ակորդիոնի դասատու 1 դրույք 80.000 դրամ:
11. Հավաքարար 1 դրույք 73.000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՅԱՆ ՔՅԱՐԱՄ
2. ԲՈՅՄՈՒՇԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՀՈՎՍԵՓ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՓԱՆՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արբաթ, (093) 90-98-99, www.arbathamaynq.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 38-Ն

ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ ենթակետի պահանջով և <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Արբաթ համայնքի 2017թ-ի տեղական տուրքերի և վճարների դրուքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՅԱՆ ՔՅԱՐԱՄ
2. ԲՈՅՄՈՒՇԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՀՈՎՍԵՓ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՓԱՆՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Արբաթ համայնքի
Ավագանու 05.12.2016թ թիվ 38- Ն որոշման

ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական / շինարարության / տեղադրման / թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբյեկտների համար
1 / մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար - 7500 դրամ
2/ սույն կետի << ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
ա/ 201 – ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 15000 դրամ
բ/ 501 -ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 25000 դրամ
գ/1001 – ից մինչև 3000 քմ.ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 25000 դրամ
դ/3001-ից և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 50000 դրամ
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
3/ մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -1500 դրամ
4/ 20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 2500 դրամ
2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների / բացառության Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի / համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինական նախագծով՝
1/չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝

ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության - 1500դրամ
2/ բացի օբյեկտի վերակառուցման , ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն , ապա , բացի սույն կետի 1 ենթակետով սահմանված դրույքաչափի , կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1 – ին կետով սահմանցված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով
3/ նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն , ապա , սույն օրենքի իմաստով , այն համարվում է նոր շինարարություն , որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1 – ին կետով սահմանված նորմերը :
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար , տեղական տուրքը սահմանվում է - 2500 դրամ
4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանվում է՝
1) ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝
յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում- 5000դրամ,
բ.26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում- 7000դրամ,
գ.51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող իմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում- 10000դրամ,
դ.101-ից մինչեւ 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպ ման դեպքում- 12000 դրամ,
ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպ ման դեպքում- 25000դրամ,
զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ

հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում- 30000 դրամ

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում- 5000 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 7000 դրամ, գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում- 10000 դրամ,

դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 12000 դրամ, ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում- 25000 դրամ,

զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում- 30000 դրամ:.

5. Համայնքի տարածքում

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 10 դրամ մեկ քմ. – ի համար

2/ հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և / կամ / սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվութ- յան համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 150 000 դրամ

3/ խանութներում ,կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման եւ նորոգման ծառայության օբյեկտներում տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 40000 դրամ

4/ համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 50 000 դրամ

5/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

Հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար- 5000 դրամ,
բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար- 7000 դրամ,
գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար- 10000 դրամ,
դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար -12000 դրամ,
ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար- 15000 դրամ,
զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար- 20000 դրամ,
ոչ հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար- 1000 դրամ՝
բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար- 1500 դրամ
գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար- 2000 դրամ,
դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար - 4000դրամ,
ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար-՝ 7000 դրամ,
զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար - 10000 դրամ:
6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները՝ ժամը 24. 00 - ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝
1/ առևտրի օբյեկտների համար - 25 000 դրամ
2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար – 50 000 դրամ
3/ բաղնիքների / սաունաների / համար - 200 000 դրամ
4/ խաղատների կազմակերպման համար - 500 000 դրամ
5/ շահումով խաղերի կազմակերպման համար - 250 000 դրամ
6/ վիճակախաղերի կազմակերպման համար - 100 000դրամ
7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին զովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 1500 դրամ
2/ թունդ ալկահոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս / արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 2 500դրամ
3/ այլ արտաքին գովազդի համար - 1000 դրամ
4/ սոցիալական գովազդի համար- 0 դրամ
5/Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի- 250դրամ
6/Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 100 դրամ , այդ գովազդի մակերեսին համապատասխան:
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է – 1000 դրամ
9.Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանում -
ներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ
10.Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 10 000 դրամ
11Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի / հրաժեշտի / ծիսակատարութ յան ծառայություններ իրականացնելու և / կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ
12. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու , շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար , ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներ սահմանել - 5 000 դրամ

13. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել – 3000 դրամ

14.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար սահմանել - 3 000 դրամ

15. Համայնքի տարածքում աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր ամսվա համար՝

1/ յուրաքանչյուր բնակչի համար - 10 դրամ

2/սպասարկում իրականացնող կազմակերպությունների համար – 100 դրամ

16 .Սույն որոշման 1 – ին , 2 – րդ , 3 – րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0 ,5 գործակցով :

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԺԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արբաթ, (093) 90-98-99, www.arbathamaynq.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 39

ԱՐԲԱԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասիբ>> Հայաստանի Հանրապետության օենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Արբաթ համայնքի հաշվեկշռում գտնվող հիմնական միջոցների գույքագրման արդյունքները
- Համայնքապետարան՝ 41 անուն և 5գծ/մ, 39299210 հազար դրամարժեքով:
- Մշակույթի տուն՝ 6 անուն, 43701 հազար դրամ արժեքով:
- Գրադարան՝ 5998 անուն, 26800 հազար դրամ արժեքով:

2. Թույլ տալ դուրս գրել ոչ պիտանի, կոտրված, արագամաշ առարկաները
- Երաժշտական դպրոց՝ դիզ. վառելիք 295 լիտր, 109.000 դրամ արժեքով, 2 դակիչ և 1 հաշվիչ 6000 դրամ արժեքով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՅԱՆ ՔՅԱՐԱՄ
2. ԲՈՅՄՈՒՇԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՀՈՎՍԵՓ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՓԱՆՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արբաթ, (093) 90-98-99, www.arbathamaynq.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 40-Ն

ԱՐԲԱԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼ ՊԱՇՏՈՆԻ ԵՆԹԱԽՄԲԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎԱՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերով և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26 հոդվածի 1-ին մասի բ) կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Արբաթի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների համար սահմանել հավելավճար՝ յուրաքանչյուր համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի 5%-ի չափով: -
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՅԱՆ ՔՅԱՐԱՄ
2. ԲՈՅՄՈՒՇԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՀՈՎՍԵՓ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՓԱՆՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արբաթ, (093) 90-98-99, www.arbathamaynq.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 41-Ն

ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ_Ի ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2017ԹՎԱԿԱՆԻ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Արբաթ համայնքի երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2017թ-ին գանձվող վճարի դրույքաչափը մեկ երեխայի համար 3000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՅԱՆ ՔՅԱՐԱՄ
2. ԲՈՅՄՈՒՇԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՀՈՎՍԵՓ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՓԱՆՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արբաթ, (093) 90-98-99, www.arbathamaynq.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 42

ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԱՆ ՇԵՆՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 35-րդ կետի 2-րդ պարբերության պահանջներով և հաշվի առնելով Արբաթ համայնքի կուլտուրայի տան վատ պայմանները

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Արբաթ համայնքի կուլտուրայի տան անբարենպաստ պայմանները հաշվի առնելով ժամանակավորապես դադարեցնել Արարատի մարզի Արբաթ համայնքի կուլտուրայի տան և այնտեղ գործող գրադարանի գործունեությունը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՅԱՆ ՔՅԱՐԱՄ
2. ԲՈՅՄՈՒՇԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՀՈՎՍԵՓ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՓԱՆՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ**